Ի՞ՆՉ Է

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԻԱՏԻՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն ընտանիք երազում է ունենալ առողջ երեխաներ, անհամբեր սպասում են նրանց ծնվելուն, ապագայի պլաններ և հույսեր են կապում իրենց երեխաների հետ: Ցավոք լինում են դեպքեր, երբ ամեն ինչ չի ընթանում այնպես դրական, ինչպես ցանկանում ենք: Անսպասելի լուրը, որ երեխան ունի ծանր անբուժելի հիվանդություն մեծ հարված է բոլոր ընտանիքների համար…

Բժիշկները ասում են, որ երեխան երկար չի ապրելու և մինչև իր կյանքը վերջը ունենալու է խնամքի կարիք:

Երջանկության ավմրտ: Կյանքի վերջ: Ինչ անել: Արդյոք հնարավոր չէ օգնել նման խնդիրներ ունեցող երեխաներին:

Այդ հարցերի պատասխանները տալիս է պալիատիվ (ամոքիչ) օգնությունը:

Մասնագետների առաջնահերթ խնդիրն է պահպանել և վերականգնել երեխայի առողջությունը, իսկ եթե դա հնարավոր չէ, այնուամենայնիվ երեխան և ընտանիքը պետք է ստանան լավագույն խնամք մինչև երեխայի կյանքի ավարտը, ինչպես նաև վշտի փուլում: Այսպիսով, պալիատիվ օգնության հիմնական նպատակն է հատուկ խնամքի միջոցով ապահովել երեխայի և նրա ընտանիքի համար կյանքի հնարավորինս լավագույն որակ, հոգալ նրա ֆիզիկական, հոգեբանասոցիալական և հոգևոր կարիքները:

Ինչ է պալիատիվ կամ ամոքիչ օգնությունը

Պալիատիվ օգնությունը կամ խնամքը բժշկագիտության առանձին ճյուղ է, առանձին մասնագիտություն:

Palliare լատիներենից նշանակում է «քողարկել, շղարշել»:

Մանկական պալիատիվ օգնությունը (ՄՊՕ) միտված է լավացնելու քրոնիկ, անբուժելի, կյանքի տևողությունը սահմանափակող հիվանդություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքը, սփոփելով նրանց ցավը և տանջող ախտանշանները, նրանց և մտերիմների տառապանքը: Այն ուղղված է ապահովելու հնարավորինս որակյալ կյանք և լավագույն խնամք անբուժելի հիվանդություն ունեցող երեխայի և նրա ընտանիքի համար:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2002թ. սահմանման՝ ՄՊՕ–ն ակտիվ, ընտանիքի ներգրավվածությամբ համակցված օգնություն է երեխայի մարմնին, գիտակցությանը և հոգուն: Այն սկսվում է ախտորոշման պահից և շարունակվում է մինչև երեխայի մահը:

ՄՊՕ, թեև որոշ հարցերում նմանվում է մեծահասակների պալիատիվ օգնությանը, այդուհանդերձ՝ առանձնահատուկ ոլորտ է, որի հիմքում ընկած է համապարփակ ամոքիչ խնամքը և հատուկ մոտեցումը:

Երեխան փոքր մեծահասակ չէ, նա զարգացող էակ է: Երեխան կարիք ունի զարգացման խթանման, կրթության, խաղի, շփման և երազանքների իրականացման:

Պալիատիվ օգնությունը որպես երեխայի հիմնարար իրավունք

Պալիատիվ օգնությունը մարդու առողջության պահպանման իրավունքի անբաժանելի տարրն է: Այն բխում է երեխայի հիմնարար իրավունքներից:

Յուրաքանչյուր երեխա պետք է դիտարկվի որպես անհատ, ով օժտված է իրավունքներով՝ անկախ իր տարիքից, սոցիալական և առողջական վիճակից, խնամքի իրականացման վայրից, և պետք է ստանա համապարփակ, շարունակական և արդյունավետ բուժում և խնամք՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

Բոլոր երեխաները, ովքեր ունեն կյանքը սահմանափակող և կյանքի տևողությունը կրճատող հիվանդություններ, ունեն որակյալ պալիատիվ օգնություն ստանալու իրավունք:

Հիվանդություն ունեցող երեխան հասարակության լիիրավ անդամ է, ով պետք է լինի հարգված և լսված որպես անհատ: Երեխան ունի իրավունք խնամք ստանալ իր տարիքին, կարիքներին, նախասիրություններին համապատասխան վայրում, որտեղ ընտանիքի անդամները նույնպես հնարավորություն ունեն գտնվելու և մասնակցելու խնամքին:

Պալիատիվ օգնությունը կարող է իրականացվել հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, խնամքի հաստատություններում և տանը: Ցանկալի է, որ ծառայությունը մատուցվի տան պայմաններում:

Մանկական պալիատիվ օգնության կարիքները Հայաստանում

Ըստ Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգման հաշվառվում է մոտ 574 ախտորոշում, որոնք երեխաների պալիատիվ օգնության տեսանկյունից համարվում են կյանքը սահմանափակող հիվանդություններ: Ի տարբերություն մեծահասակների, որոնց խմբում կարիքների շուրջ 80% պայմանավորված են չարորակ նորագոյացություններով, մանկության շրջանում գերակշռում են ոչ քաղցկեղային հիվանդությունները:

Հայաստանում 2015թ. կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տարեկան կտրվածքով տարբեր ախտորոշումներով 0–18 տարեկան շուրջ 3000 երեխաներ պալիատիվ օգնության կարիք ունեն: Այդ երեխաների զգալի մասը ունեն նյարդամկանային հիվանդություններ և զարգացման ծանր խանգարումներ, էնդոկրին և նյութափոխանակության խանգարումներով ուղեկցվող հիվանդություններ, բնածին արատներ և անոմալիաներ, չարորակ հիվանդություններ և այլ քրոնիկ անբուժելի հիվանդություններ:

Ինչպե՞ս կարելի է օգնել երեխային

Մեր շրջապատում ապրում են տասնյակ երեխաներ, ովքեր ունեն այնպիսի հիվանդություններ, որոնք, ցավոք, հնարավոր չէ բուժել: Պալիատիվ օգնության հիմնական գաղափարն է՝ «եթե երեխային հնարավոր չէ բուժել, դա չի նշանակում, որ նրան հնարավոր չէ օգնել»:

ՀՀ-ում հարյուրավոր երեխաներ ունեն մեր բոլորիս օգնության և աջակցության կարիքը:

ՄԻԱՎՈՐԵ՛ՆՔ ՁԱՆՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԻԱՏԻՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Տեղեկատվական նյութը պատրաստվել է Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից՝ Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության աջակցությամբ:

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան